«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության
մանկավարժական աշխատողների մասնագիտական
կարողությունների ու հմտությունների զարգացման»
ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում

Դաստիարակ՝ Նաիրա Գևորգյան

Մանկապարտեզ՝ «108» ՀՈԱԿ

2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3

ԳԼՈՒԽ I

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ-ԾՆՈՂ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎՐԱ……4

ԳԼՈՒԽ II

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՆՊԱՏԱԿԸ……7

ԳԼՈՒԽ III

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ՎԱՐՔԻ ՎՐԱ……10

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……13

«ԱՄՈՒՐ ԸՆՏԱՆԻՔ» ՊԱՐԱՊՄՈՒՆՔ……14

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ……18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից իրականության մեջ վստահ կարևորվում է ընտանեկան դաստիարակություն և նախադպրոցական հաստատություն սերտ փոխհամագործակցությունը, քանի որ և՛ դաստիարակի, և՛ ծնողի գործունեությունն ուղղված է սանի ձևավորմանը և զարգացմանը, ինչն իրականացվում է դաստիարակչական գործընթացի ընթացքում: Դաստիարակի գերխնդիրն ու առաքելությունը մարդկային էության բացահայտումն է, հոգու կառուցումը: Ուստի կարևոր է և անգնահատելի դաստիարակչական գործընթացում երեխաների հետ տարվող ճիշտ ու համակողմանի աշխատանքը, որն անկյունաքարային է ու կարևոր, անձի հետագա կենսագործունեության համար: Առողջ համագործակցության արդյունքում, անշուշտ, հնարավոր է սահուն անցնել ուսումնական բոլոր մակարդակները ու բազում հմտություններով, նոր գիտելիքներով մտնել կյանքի հաջորդ շրջափուլ: Դաստիարակության գործում միշտ, այսօր մասնավորապես, կարևորվում է երեխայի նկատմամբ ծնողի վերաբերմունքի ճիշտ դրսևորումը: Հիմնական բնավորության գծերը ձևավորվում են ծնողների ազդեցության տակ մանկության տարիներին և այն սերմերը, որոնք ցանվել են ծնողների կողմից, կարող են հավասարապես վերանալ կամ բողբոջել նախադպրոցական ուսումնական հաստատությունների միջավայրում՝ խմբի, դաստիարակների ազդեցության տակ: Մեծ է դաստիարակի դերը, սակայն դաստիարակն ավելի վստահ է գործում և առաջ է շարժվում, երբ սանի ծնողի կամ օրինական ներկայացուցչի հետ ունի ընդհանուր նպատակ, ուստի առանցքային է երկու սուբյեկտների առողջ համագործակցումը: Սույն հետազոտության արդիականության համար հիմք է ծառայում ծնող-դաստիարակ հաստատուն կապի անհրաժեշտությունը, որն ունակ է ազդել երեխայի դաստիարակության որակի բարձրացման վրա: Դաստիարակ-ծնող փոխհամագործակցությունը՝ միասնական ուժերով վատթարագույն երևույթները արմատախիլ անելու և անհրաժեշտ նվազագույնը սերմանելու նպատակով:

ԳԼՈՒԽ I

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ-ԾՆՈՂ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Ինչպես գիտենք, նախակրթական գործընթացի մասնակից են համարվում երեխան, երեխայի ծնողը կամ օրինական ներկայացուցիչը և դաստիարակը: Իրենց իրավունքներն ու պարտավորությունները սահմանված են օրենքով: Դաստիարակը նախակրթական գործընթացի հիմնական կազմակերպիչն ու իրականացնողն է, ով մեծագույն պատասխանատվություն է կրում երեխայի չափորոշչային վերջնարդյունքներին հասնելու համար: Սակայն այս տեսակետից շատ կարևոր է նաև սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցչի պատասխանատու վերաբերմունքը կրթական գործընթացին, վերջինիս կողմից դաստիարակի հետ համագործակցելու, երեխային վերահսկելու ու առաջնորդելու գործառույթը: Ծնող-դաստիարակ հաղորդակցությունը մեծ դեր է խաղում սանի կրթության որակի բարելավման համար, քանի որ ծնողներն ու դաստիարակները հաղորդակցության ու համագործակցության ընթացքում միասին են սկսում հետազոտել սանի անձնային առանձնահատկությունները, ցանկություններն ու երազանքները, ինչը թույլ է տալիս վերջիններիս ավելի խորքային ճանաչել երեխային ու հաշվի նստել նրա պահանջմունքների հետ: Դաստիարակը երեխայի ընտանիքը ճանաչում է հենց նրա աչքերով, ավելին երեխայի վարքը հաճախ դաստիարակի ներկայությամբ կարող է տարբեր լինել, ուստի այս պարագայում մշտական կապը սանի ծնողի հետ թույլ կտա անուղղակի կերպով կառավարել երեխային: Կարծում ենք այս մշտադիտարկումը շատ կարևոր է, որպեսզի համագործակցող կողմերը կարողանան վստահ լինել, որ երեխան իրենց երկուսի հետ էլ ազնիվ է և որևէ զարտուղի ճանապարհ չի գտնի անթույլատրելի արարքներ գործելու համար: Այստեղ շատ կարևոր է կողմերի միջև անվերապահ վստահությունը, ինչպես նաև ծնողի համար դաստիարակի ու մանկապարտեզի հետ մշտական կապը շատ կարևոր է, քանի որ դա նրան թույլ է տալիս մշտապես տեղեկություն ստանալ իր երեխայի մասին՝ լինի դա վարքի հետ կապված

դժվարությունների, հասակակիցների հետ խնդիրների, վարքային շեղումների, թե կրթական ձեռքբերումների մասին: Երեխայի բնականոն զարգացման ու դաստիարակության գաղափարն է միավորում ծնողներին և դաստիարակներին, ուստի համագործակցությունը պետք է ուղղված լինի հենց այդ գաղափարի բնականոն ու արդյունավետ իրականացմանը: Ծնողների ներգրավվածությունը երեխայի դաստիարակչական կյանքին ոգևորիչ է նաև դաստիարակի համար, քանի որ դժվարությունների առաջացման ժամանակ, վերջինս կարող է հույս դնել ծնողական օգնության վրա: Ծնողների ներգրավվածությունը երեխայի դաստիարակչական կյանքին և գործընթացին իր մեջ ներառում է.

- մանկապարտեզի միջոցառումներին հնարավորինս շատ մասնակցություն
- երեխայի կողմից լավ կատարված աշխատանքի խրախուսում և գովաբանում
- ծնողական ժողովներին ակտիվ մասնակցություն,
- այլ ծնողների հետ քաղաքավարի շփում, համագործակցություն
- մանկապարտեզի համար խելամիտ ու հիմնավոր պահանջների նախանշում
- դաստիարակների և ծնողների հետ կանոնավոր հանդիպումներ

Նման միջավայրի ապահովումը կարող է խթանել մանկավարժական աշխատողի աշխատանքի արդյունավետությունը, քանի որ ծնողների հետ համատեղ ջանքերով կարելի է հասնել երեխայի՝ ինքնորոշման, ինքնակառավարման, խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ կարողունակությունների անցնցում ձևավորմանը:

Մանկապարտեզի և ընտանիքի համագործակցությունը երկարատև ու բարդ գործընթաց է, որի հիմքում պետք է դրված լինեն մի շարք սկզբունքներ, որոնց թվում են.

- առողջ բարոյահոգեբանական միջավայրը
- արդյունավետ հետադարձ կապի մեխանիզմների գործարկումը
- սխալների ընդունումը, վերլուծությունը և թերի կողմերի

արձանագրումը

- անձնային բարձր որակների դրսևորումը

Ծնողները և դաստիարակը պատասխանատվություն են կրում միևնույն երեխայի կրթության ու դաստիարակության համար, հետևաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի, երբ վերջիններս մշտապես կապ պահեն միմյանց հետ, ձևավորեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ ու հայացքներ, ինչպես նաև փորձեն համատեղ ուժերով մշակել դաստիարակչական մեխանիզմներն ու դրանց լուծման ուղիները: Այսպիսով, վստահաբար կարող ենք ասել, որ նախադպրոցական հաստատությունում ավելի լավ արդյունքների հասնելու, երեխաների կրթության ու դաստիարակության համար նպաստավոր պայմաններ ստեղծելու համար մանկապարտեզը և դաստիարակը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցմամբ: Իսկ ծնողները, առաջնային համարելով սեփական երեխայի լավ ու որակյալ կրթությունն ու դաստիարակությունը, պետք է մշտապես համագործակցեն մանկապարտեզի մանկավարժական աշխատողների, այլ սաների ծնողների հետ:

ԳԼՈՒԽ II

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՆՊԱՏԱԿԸ

Ծնողների հետ մշտական կապի մեջ լինելու, հնարավոր կազմակերպչական հարցերը քննարկելու համար դաստիարակը սահմանված կարգի համաձայն պետք է անցկացնի ծնողների հետ ընդհանրական հանդիպումներ՝ ծնողական ժողովներ: Սա այն հարթակն է, որտեղ թե՝ դաստիարակը, թե երեխայի ծնողը՝ հայրը, մայրը, օրինական ներկայացուցիչը, ունեն հնարավորություն ուղիղ հաղորդակցման: Ծնողական ժողովը ծնողների հետ աշխատանքի հիմնական ձևն է, որի միջոցով լուծվում են խմբի ժողովների ժամանակ առաջացած խնդիրները, քննարկվում են երեխաների հնարավոր վարքային, կրթական և այլ բնույթի հարցերը: Փորձենք հասկանալ, թե ինչու է այնուամենայնիվ հարկավոր հավաքել ծնողներին: Առաջին հերթին հարկավոր է ստանալ այնպիսի տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են երեխաների հետ աշխատելիս: Դաստիարակի համար այդպիսի տեղեկությունները նրա մասնագիտական հարստությունն են՝ որոշումներ ընդունելու հիմքը: Այդ առումով ցանկացած ժողովի համար անհրաժեշտ է նախապատրաստել ծնողներին տրվող հարցեր: Որպես օրինակ կարող ենք դիտարկել այս հարցաթերթիկը.

ՀԱՐՑԱԹԵՐԹ

Հարց 1. Հաճույքո՞վ է Ձեր երեխան գալիս մանկապարտեզ:

Հարց 2. Որո՞նք են Ձեր երեխայի թերությունները, ուժեղ կողմերը և թուլությունները:

Հարց 3. Որո՞նք են ձեր երեխայի տնային պարտականությունները:

Հարց 4. Ձեր երեխան ի՞նչ ռեժիմով է ապրում տանը:

Հարց 5. Ի՞նչ նախասիրություններ ունի ձեր երեխան:

Իհարկե, ծնողների պատասխաններից չի կարելի սպասել լիովին անկեղծություն, բայց ցանկացած դեպքում դրանք կարևոր տեղեկություններ են և մտածելու տեղիք են տալիս: Այսուհանդերձ, այս համագործակցության շրջանակներում հնարավոր են նաև կոնֆլիկտներ, անհամաձայնություններ, որոնք կարող են վնաս բերել բուն

դաստիարակչական գործընթացին,ինչպես նաև մտցնել լարվածություն: Ուստի շատ կարևոր է երկուստեք պահպանել բարեվարքության կանոնները, լսել խնդիրն ու բերել հիմնավոր փաստարկներ, չառաջնորդվել բացառապես սեփական շահով: Լարվածությունը, կոնֆլիկտների անկառավարելիությունը, անշուշտ, այս գործընթացում տեղ չունեն: Կողմերը երկուստեք պետք է գիտակցեն, որ քննարկումն ու բացասական կողմերի մատնանշումն ուղղված է ոչ թե իրենց իրավունքների կամ արժանապատվության ոտնահարմանը, այլև հիմնախնդրի բարձրաձայնմանն ու հնարավոր լուծումներ գտնելուն:

Ծնողական ժողովների ժամանակ դաստիարակը պետք է ունենա հստակ սահմանված օրակարգ, որի համաձայն պետք է անցկացնի այն: Ժողովն անցկացնելիս՝ դաստիարակը պետք է նկատի ունենա հետևյալ սկզբունքները

- ժողովը սկսեք ողջույնի խոսքով
- ներկայացրեք ժողովի օրակարգը
- խոսեք նախ դրական հարցերի մասին
- երեխաների բացասական կողմերը ներկայացնելիս եղեք նրբանկատ
- օրակարգի յուրաքանչյուր հարց քննարկելուց հետո անպայման լսեք ծնողների առաջարկությունները:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ այն երեխաները, ում ծնողներն ակտիվ են իրենց երեխայի նախադպրոցական հաստատությունների և դաստիարակության հարցերում, կառուցողական են դաստիարակների հետ համագործակցության ժամանակ, կարող են ունենալ ավելի շատ ձեռքբերումներ:

Ծնողների ներգրավվածությունը կարևոր է ինչպես դաստիարակության արդյունքների բարելավման, այնպես էլ ծնողի ունակություն-հմտությունների զարգացման համար: Փոխվում է ծնողի սոցիալական, զգացմունքային կողմը և անձնական հատկանիշները: Երեխայի կրթության և դաստիարակության գործընթացին մասնակցելու հետևանքով ծնողն ավելի է հասկանում սեփական երեխային՝ մեծ ուշադրություն հատկացնելով երեխայի սոցիալական, զգացմունքային և մտավոր զարգացման անհրաժեշտություններին: Մանկավարժական աշխատողի

հետ համագործակցության արդյունքում ծնողը սկսում է վերանայել իր պահվածքն ու փորձում երեխայի հետ հարաբերություններում լինել ավելի հարմարվող ու հանդուրժող: Ծնողի համար այդ համագործակցության արդյունքում հասկանալի է դառնում սեփական երեխայի պահանջմունքները, ցանկություններն ու երազանքները, քանի որ դաստիարակից ստացած տեղեկատվության հիմնական մասին նա չի տիրապետում: Այսպիսով այս համագործակցության շնորհիվ ծնողի համար նկատելի փոփոխություններից են.

- ավելի հոգատար դառնալը
- երեխայի ձեռքբերումները գնահատելը և բարձրաձայնելը
- դրական հարաբերությունների ստեղծումը իր երեխայի դաստիարակի հետ

Այսպիսով, կարող ենք վերահաստատել այն պնդումը, որ դաստիարակի համագործակցումը երեխայի ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ երեխայի կրթության կազմակերպման ու դաստիարակության մեջ ունի առանցքային նշանակություն:

ԳԼՈՒԽ III

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ՎԱՐՔԻ ՎՐԱ

Ընտանիքը, որպես դաստիարակության միջավայր, նրա ազդեցությունն անձի դաստիարակության գործընթացի և արդյունքների վրա շատ կարևոր են երեխայի բնականոն զարգացման համար: Սա այն միջավայրն է, որտեղ ծնվում ու աշխարաճանաչողության սկզբնական քայլերն է անում մանուկը, պատանին դեռահասը, ուստի ծնողի, ընտանեկան միջավայրի ուղիղ ներգործությունը ողջ կյանքի վրա ունենում է մեծ ազդեցություն: Երեխայի նկատմամբ իրականացվող ցանկացած գործողություն պետք է բխի նրա լավագույն շահերից: Երեխայի լավագույն շահերի ապահովումն ուղղված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված՝ երեխայի իրավունքների արդյունավետ և ամբողջական իրականացմանը, ինչպես նաև երեխայի զարգացմանը՝ հաշվի առնելով երեխայի մտավոր և ֆիզիկական կարիքները, այդ կարիքների բավարարման համար համապատասխան խնամքի և դաստիարակության հնարավորությունը, ընտանիք վերադառնալու կամ ընտանիքի հետ ապրելու կարևորությունը, երեխայի զարգացման համար ծնողի և ընտանիքի այլ անդամների հետ շփվելու կարևորությունը, ազգային պատկանելության հարցը, երեխայի մշակութային, լեզվական, հոգևոր կամ կրոնական կապերը կամ դաստիարակությունն ու նշանակությունն ընտանեկան միջավայրում և այլ կարիքները, պահանջները և շահերը (այսուհետ՝ Երեխայի լավագույն շահեր): [1]

Կարևոր հանգամանք է երեխայի կարգավիճակը ընտանիքում: Այս հարցը նույնպես պետք է դնել ընտանիք-կրթօջախ համագործակցության ակունքում: Այս մասով իր կարևոր դերակատարումն ունի նախադպրոցական հաստատության դաստիարակը, ով համագործակցելով ծնողների հետ, ուսումնասիրում է երեխաների կյանքի պայմանները, ընտանիքի առանձնահատկությունները, ընտանեկան փոխհարաբերությունների ազդեցությունը երեխայի վրա, նրանց սոցիալական միջավայրը, շփումները, հետաքրքրությունները, հաղորդակցման դժվարությունները, սոցիալական միջավայրում հարմարման և պաշտպանվածության մակարդակը:

[1] ՀՀ Օրենսդրություն *Հոդված 1 «Ընտանեկան օրենսդրության հիմնական սկզբունքները»*

Որպեսզի դաստիարակչական գործընթացն ընտանիքում անցնի արդյունավետ, հարկավոր է, որ ծնողներն առաջին հերթին բացառեն որևէ բռնություն, վատ կամ բացասական ներգործություն երեխայի վրա: Սա կարող է կազմաքանդել երեխայի բնականոն հոգեկան զարգացումն ու անդառնալի հետևանքներ ունենալ: Դաստիարակության գործում միշտ, այսօր առավելապես, կարևորվել է երեխայի նկատմամբ ծնողի ճիշտ դրսևորուները: Ծնողական սերն ու հոգատարությունը կենսական անհրաժեշտություն են երեխայի գոյապահպանման համար: Հակառակ դեպքում մի կողմից անտարբերությունն ու եսասիրությունը, մյուս կողմից ծնողական սիրո բացակայությունը հանգեցնում են ատելության, արհամարանքի՝ ծանրացնելով թե' երեխայի, թե' ծնողի կյանքը: Ընտանիքը փոքրիկ հասարակություն է, որի ամբողջականությունից է կախված մարդկային ամբողջ մեծ հասարակությունը: Կարգապահության լավագույն դպրոցը հենց ընտանիքն է, որի գլխավոր իմաստն ու նպատակը երեխաների դաստիարակությունն է: Իսկ երեխաների դաստիարակության գլխավոր դպրոցը ծնողների փոխհարաբերություններն ու վերաբերմունքն է միմյանց նկատմամբ: Ուստի, ընտանեկան դաստիարակության շատ դժբախտությունների արմատները թաղված են հենց այնտեղ, ուր ծնողները երեխային մանկությունից չեն սովորեցրել ղեկավարել սեփական ցանկությունները, չեն սովորեցրել ճիշտ վերաբերվել մեծերին, բարեվարք պահել շրջապատում: Առանց ընտանեկան ճիշտ դաստիարակության մանկապարտեզում երեխային կառավարելն ու վերահսկելը անչափ դժվար է մանկավարժական աշխատողի համար: Այն ծնողներն են շահում, ովքեր երեխաների դաստիարակությունն իրականացնելիս ամեն ինչի չափը դարձնում են սովորույթ, բնավորության գիծ, ամենօրյա կանոն, ու դրանցով այնպես են առաջնորդվեում, ինչպես օրենքը հարգող դատավորը: Ծնողները դաստիարակի անմիջական օգնությանմբ պարտավոր են սիրո զգացմունքներ դաստիարակել: Ինչպես գիտենք շատերս, ընդօրինակման օրինակներ կարող են լինել հայրը, մայրը, տատիկը, եղբայրը, դաստիարակը, ընկերը, մուլտֆիլմի կերպարը և այլոք: [2] Ծնողը պիտի ընկեր լինի իր երեխայի համար, հաճախակի զրուցի նրա հետ կյանքից, բարուց ու չարից, լավ ու վատից, հասարկությունից, արժեքներից, հայրենիքից, ծնողից,

[2] *Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան «Մանկավարժություն» ուսումնական ձեռնարկ, էջ 293*

տնից, հազար ու մի կարևոր մանրուքներից: Այս բոլորն էլ ի վերջո կկազմեն այն դաստիարակությունը, այն արժեքային համակարգը, որ ծնողը կփոխանցի իր երեխային:

Այսպիսով, կարծում ենք, որ որևէ կերպ չի կարելի անտեսել ծնողին: Եթե վերջինս չի պատկերացնում սեփական երեխայի դաստիարակության հարցերում իր կարևոր դերակատարումը, ապա հարկավոր է, որ դաստիարակը սկսի հենց այդ կետից՝ ծնողին բերել համագործակցային դաշտ: Ամփոփելով սույն հետազոտության թեման՝ ձեռք բերեցինք ավելի խորքային գիտելիքներ, որոնք, վստահաբար, կաջակցեն մեզ մեր հետագա մանկավարժական գործունեության ընթացքում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, վերլուծելով ծնող-դաստիարակ և ընտանիք-երեխա փոխհարաբերությունները, եկանք այն եզրակացության, որ ընտանիքը՝ հանդիսանալով որպես դաստիարակության միջավայր, իր ազդեցությունն անձի դաստիարակության գործընթացի և արդյունքների վրա շատ կարևոր դեր են կատարում երեխայի բնականոն զարգացման համար: Հետազոտական աշխատանքի ընթացքում ներկայացված հարցաթերթի պատասխանների հիման վրա պարզ դարձավ, որ շատ դեպքերում ծնողը անտեղյակ է իր երեխայից, չգիտի նախասիրությունները և չի գիտակցում երեխա-ծնող փոխհարաբերությունների կարևորությունը: Սակայն, հարկ է նշել, կային ծնողներ, որոնք հստակ տեղյակ էին իրենց երեխայի ամեն մի նախասիրության մասին, որը իր մեծ դրական ազդեցությունը կունենա երեխայի դաստիարակչական ուղու ընթացքում: Դաստիարակ-ծնող փոխհամագործակցության արդյունքում կարող ենք հասնել նրան, որ ծնողը և դաստիարակը երեխայի դաստիարակության հարցում ունենան միասնական պահանջներ ու նպատակներ:

Այսպիսով, կարող ենք հանգել այն եզրակացությանը, որ դաստիարակը շատ կարևոր դերակատարում ունի երեխաների կրթության ու դաստիարակության գործընթացում՝ սաների ծնողների հետ կառուցողական ու բարենպաստ հարաբերություններ հաստատելու առումով՝ իհարկե չմոռանալով ընտանիքի և մանկապարտեզի փոխգործունեության ձևերը, որոնք հնարավորություն են տալիս կողմերին առողջ բանակցային հարաբերություններ ստեղծել՝ ստեղծելով ընդհանուր նպատակներ ու մղումներ:

Կարևոր է նշել, որ դաստիարակի սերտ համագործակցությունը երեխայի ծնողի կամ օրինական ներկայացուցիչների հետ կարող է լուծել կրթական ու դաստիարակչական մի շարք հիմնախնդիրներ:

«Ամուր ընտանիք» թեմայով պարապմունք

Առաջնորդվելով հետազոտական աշխատանքի ուսումնասիրություններով, անցկացրել եմ «Ամուր ընտանիք» թեմայով պարապմունք, որի նպատակն էր հարստացնել ընտանիքի մասին երեխաների գիտելիքները և պատկերացումները, քանի որ ընտանիքն արտացոլում է տվյալ հասարակության բարոյական և մշակութային նկարագիրը:[3] Զարգացնել կապակցված խոսքը: Ապլիկացիայի միջոցով ամրացնել մեծ, միջին, փոքր հասկացությունները, զարգացնել աչքաչափը, կատարելագործել ապլիկացիոն ունակությունները, ինչպես նաև ճաշակը՝ ամրապնդելով կոկիկ աշխատելու հմտությունը:

Անհրաժեշտ պարագաներն էին- Սոսինձ, ծառի նկար, տարբեր չափերի կտրած նուռ. ընտանեկան իրավիճակները պատկերող նկարներ:

Ընթացքի նկարագրություն

- Երեխանե՛ր, ի՞նչ եք հասկանում ընտանիք ասելով:
Երեխաներ-....
-Դե, եկեք բոլորս աղոթենք մեր ընտանիքների համար:

Աղոթք «Հայր մեր»:

-Երեխանե՛ր, ի՞նչ եք հասկանում ընտանիքի անդամներ ասելով, ո՞վքեր են ընտանիքի անդամները:

Երեխաներ-....

-Ինչու՞ ենք ասում մեծ և փոքր ընտանիք:

Երեխաներ-....

[3] *Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ «Մանկության հիմնախնդիրը ժամանակակից հայ ընտանիքում», Երևան, 2016,էջ 9*

- Բացի մարդկանցից, բնության մեջ, ո՞վքեր ունեն ընտանիք: Երեխաներ-....

-Ինչպիսի՞ն պետք է լինի ընտանիքը:

Երեխաներ-....

-Որպեսզի ամուր լինի ընտանիքը, ինչպե՞ս շփվել իրար հետ, ի՞նչ բառեր օգտագործել ընտանիքում:

Երեխաներ-....

-Ի՞նչ դեր և պարտականություն ունի յուրաքանչյուրս ընտանիքում:

Երեխաներ-....

-Ո՞վ է ընտանիքի գլխավորը:

Երեխաներ-....

-Երեխաներ, ընտանիքի միջազգային օրը նշվում է 1993 թվականից՝ սեպտեմբերի 20- ին: Իսկ այժմ ձեզ կծանոթացնեմ մի քանի մտքերի, որոնք ասվել են հայտնի մարդկանց կողմից և ընտանիքի մասին են:

1. Ազգերի զորությունը ընտանիքի մեջ է:
2. Ընտանիքը բնության հրաշքներից մեկն է:
3. Պետության հիմքը ամուր ընտանիքն է:
4. Զորավոր է այն ազգն, ով ունի ամուր ընտանիք:
5. Ընտանիքի սյունը հայրն է, իսկ աստվածն ու պահապանը՝ մայրը:

-Երեխաներ, եկե՛ք երգ նվիրենք մեր մայրիկներին:

Երգ «Մայրիկ»

-Իսկ հիմա, երեխաներ, ես կցուցադրեմ ընտանեկան իրավիճակներ պատկերող նկարներ, իսկ դուք գտեք, համեմատեք և ընտրեք այն նկարը, որտեղ պատկերված իրավիճակը ձեզ ծանոթ է:

Երեխաներ-....

-Երեխանե՛ր, կա մի հասկացություն՝ «Տոհմածառ», որը նշանակում է, որ մի ամբողջ ազգ այդ տոհմին են պատկանում: Այսօր մենք չենք անդրադառնա տոհմածառին, բայց կպատրաստենք մեր ընտանիքի ծառը:

-Երեխանե՛ր, մեր բոլորի ընտանիքներն էլ մեր մայր Հայաստանի ընտանիքի անդամներն են:

Մի երգ էլ նվիրենք մեր ամենամեծ ընտանիքին՝ մեր մայր Հայաստանին: Երգ «Իմ մայր Հայաստան»
-Դե, եկեք յուրաքանչյուրս մեր ընտանիքի մարդկանց քանակով փակցնենք մեր ընտանեկան ծառի պտուղները: Յուրաքանչյուրիդ ծառը կլինի տարբեր քանակի պտուղներով: Ինչու՞:

Երեխաներ-....

Ապլիկացիա- Ընտանիքի ծառ

Ամփոփում- Այսօր մենք ինչի՞ մասին խոսեցինք:

Երեխաներ-....

-Ապլիկացիայի պարապմունքին ի՞նչ աշխատանք կատարեցինք:
Երեխաներ-....

Եզրակացություն

Այս պարապմունքի միջոցով ամրապնդվեց երեխաների գիտելիքներն «Ընտանիք» հասկացության վերաբերյալ: Դաստիարակվեց սեր և հարգանք ընտանիքի անդամների նկատմամբ:

Պարապմունքը դիտեցին մեթոդիստ՝ Մ. Շահինյանը և մանկապարտեզի դաստիարակները և եկան այն եզրակացության, որ երեխաները ակտիվ մասնակցություն էին ցուցաբերում պարապմունքի ընթացքում: Կարողանում էին ճիշտ պատասխանել դաստիարակի կողմից տրված հարցերին: Երեխաները իրենց ընտանիքի անդամների քանակով «Տոհմածառին» փակցրեցին պտուղները՝ կոկիկ աշխատելով և համագործակցելով ընկերների հետ, որն էլ իր հերթին նպաստում էր թիմային ոգու զարգացմանը: Պարապմունքը հագեցած էր անհրաժեշտ դիդակտիկ նյութերով:

-Ես եկա այն եզրակացության, որ ընտանիք-մանկապարտեզ համագործակցության հաջողությունը կախված է ընտանիքի և մանկապարտեզի սերտ փոխհարաբերությունից: Մանկապարտեզը պետք է աշխատի ընտանիքի հետ, պետք է պահպանի բարեկամական, գործընկերային հարաբերություններ, քանի որ մանկապարտեզ-ընտանիք կապի ամրապնդման համար կարևորվում է մեր համատեղ աշխատանքը, որն էլ երկուստեք հաճելի է: Ընտանիք-մանկապարտեզ արդյունավետ համագործակցությունը մեծապես նպաստում է երեխայի զարգացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Պետրոսյան, «Մանկավարժական աշխատողի աշխատանքի կազմակերպումը ուսումնական հաստատություններում»:
2. Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, «Մանկության հիմնախնդիրը ժամանակակից հայ ընտանիքում», Երևան, 2016:
3. Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան «Մանկավարժություն» ուսումնական ձեռնարկ Երևան, 2005:
4. «Նախադպրոցական մանկավարժություն» դասագիրք, Երևան, 1992
5. ՀՀ ընտանեկան օրենսգիրք:
6. ՀՀ Հանրակրթության մասին օրենք: